ԹՎԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

(ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ)

Քարտի տեսակ	Visa Digital	Visa FIFA World Cup 26™ [1]
Քարտի պատվիրման եղանակ	Բանկի բջջային հավելվածի միջոցով	
Քարտային հաշվի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո,
Քարտի գործողության ժամկետ	3 տարի	5 տարի
Քարտի թողարկման միանվագ վճար	Չի սահմանվում	
Քարտային հաշվի սպասարկման տարեկան վճար	Չի կիրառվում	2000 ՀՀ դրամ[2]
Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը	0%	
Կից քարտերի հնարավորություն	Չի կիրառվում	
Կանխիկի տրամադրում Ինեկոբանկի կանխիկացման կետերում	0%	
Առանց քարտի կիրառման կանխիկի տրամադրում Ինեկոբանկի դրամարկղերում	• ՀՀ դրամ՝ 0.2%, բայց ոչ պակաս քան 500 ՀՀ դրամ • ՌԴ ռուբլի՝ 0.5%, բայց ոչ պակաս քան 2 000 ՀՀ դրամ • ԱՄՆ դոլար՝ 1%, բայց ոչ պակաս քան 2 000 ՀՀ դրամ • Եվրո՝ 1%, բայց ոչ պակաս քան 2 000 ՀՀ դրամ	
Կանխիկի տրամադրում[3] ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կանխիկացման կետերում[4]	1%	
Կանխիկի տրամադրում ArCa համակարգի միջոցով հավաստագրում չտրամադրող բանկերի կանխիկացման կետերում և ՀՀ տարածքից դուրս	2%, սակայն ոչ պակաս քան 1,500 ՀՀ դրամ	
Քարտային հաշվից նույն հաճախորդի այլ բանկային հաշիվներին փոխանցում[5] (միայն ԻնեկոՕնլայն/ԻնեկոՄոբայլ համակարգերով)	0%	
Քարտից քարտ փոխանցում[5]	0.5%	

[1] Visa FIFA World Cup 26™ քարտը հաճախորդի ընտրությամբ կարող է տրամադրվել նաև ֆիզիկական տարբերակով:

[2] Visa FIFA World Cup 26™ քարտի ֆիզիկական տարբերակի համար քարտի տարեկան սպասարկման վճարը սահմանվում է 3,000 ՀՀ դրամ:

[3] Առանց քարտի կիրառման բանկոմատներից կանխիկացումը՝ Apple Pay և Google Pay համակարգերի միջոցով իրականացնելու դեպքում միանվագ գործարքի սահմանաչափը՝ 150.000 ՀՀ դրամն է:

[4] Անկախ սույն փաստաթղթով սահմանված սակագներից՝ այլ բանկերը իրենց կողմից սպասարկվող կանխիկացման կետերում կարող են կիրառել լրացուցիչ վճարներ իրականացվող գործարքների համար: Սույն փաստաթղթով սահմանված սակագինը կիրառվում է գործարքի ամբողջական գումարի նկատմամբ, որը ներառում է նաև այլ բանկի կողմից հնարավոր միջնորդավճարները:

[5] ԻնեկոՕնլայն/Մոբայլ համակարգերի «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարվող փոխանցումների համար կիրառվում են «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարված գործարքների համար սահմանված սակագները, Ինեկոբանկի պաշտոնական կայքի «Առցանց վճարումներ» համակարգով կատարված գործարքների համար կիրառվում են «Առցանց վճարումներ» համակարգի միջոցով կատարվող գործարքների համար սահմանված սակագները:

Կատարված գործարքների վերաբերյալ SMS/Viber/WhatsApp հաղորդագրության ուղարկում[6]	Յուրաքանչյուրը 15 ՀՀ դրամ, եթե հաճախորդը ցանկանում է ստանալ հաղորդագրություն: *Հաճախորդի կողմից այլ հանձնարարական չլինելու դեպքում հաղորդագրությունները ուղարկվում են 1,000 ՀՀ դրամ/ 2 ԱՄՆ դոլար/ 2 Եվրո/125 ռուբլի գումարը գերազանցող գործարքների համար:*
Քարտային հաշվի վաղաժամկետ փակում	անվճար

Ընդհանուր դրույթներ սույն փաստաթղթով սահմանված Visa Digital և Visa FIFA World Cup 26™ թվային քարտերի համար

1. Visa Digital և Visa FIFA World Cup 26™ (թվային տարբերակով) դեբետային քարտեր են, որոնք հասանելի են քարտապանին Բանկի բջջային հավելվածում և նախատեսված են առցանց միջավայրում գործարքներ իրականացնելու համար:
2. Սույն փաստաթղթով սահմանված թվային վճարային քարտերը Բանկի բջջային հավելվածում հասանելի են դառնում քարտերը պատվիրելուց հետո առավելագույնը 2 ժամվա ընթացքում: Visa Digital և Visa FIFA World Cup 26™ քարտի տվյալները (քարտի համարը, վավերականության ժամկետը և քարտի իսկությունը ստուգուղ կոդը (CVV)) քարտապանին տրամադրվում են Բանկի բջջային հավելվածի միջոցով:
3. Յուրաքանչյուր վճարային քարտի կցվում է միայն մեկ արժույթով հաշվեհամար:
4. Քարտային հաշվի նվազագույն մնացորդ չի սահմանվում:
5. Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը 0 է:
6. Յուրաքանչյուր հաճախորդի գծով, յուրաքանչյուր արժույթով (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի) Visa Digital քարտի առավելագույն քանակը չի կարող գերազանցել 2 քարտը:
7. Visa Digital և Visa FIFA World Cup 26™ վճարային քարտերով անկանխիկ գործարքների իրականացումն անվճար է: Մեկ անկանխիկ գործարքի համար առավելագույն սահմանաչափ, ինչպես նաև անկանխիկ գործարքների օրական առավելագույն սահմանաչափ և քանակ չի սահմանվում: Քարտով կատարված անկանխիկ գործարքների պատասխանատվությունը կրում է հաճախորդը:
8. Կանխիկացման կետերում կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակը 10 գործարք է:
9. Կանխիկացման կետերում կանխիկացման գործարքների օրական առավելագույն սահամանաչափն է՝

	Visa Digital	Visa FIFA World Cup 26™
ՀՀ դրամ	1,250,000	2,000,000
ԱՄՆ դոլար, Եվրո	2,500	4,000
ՌԴ ռուբլի	200,000	300,000

10. Հաճախորդի դիմումի համաձայն կանխիկացման սահմանաչափը պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար բարձրացման դեպքում կիրառվում է 10,000 ՀՀ դրամ սակագին: *
11. Visa FIFA World Cup 26™ ֆիզիկական քարտը տրամադրվում է առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մարզերում գտնվող Բանկի մասնաճյուղերի համար նշված ժամկետին գումարվում է նաև քարտի տեղափոխման ժամանակը: Քարտի շտապ պատվիրման դեպքում գործում է 3,000 դրամ սակագին: Շտապ պատվիրման դեպքում քարտը տրամադրվում է 1 բանկային օրվա ընթացքում Բանկի Մանրածախ կամ Ունիվերսալ մասնաճյուղում, իսկ մարզերում գտնվող Բանկի մասնաճյուղերի համար նշված ժամկետին գումարվում է նաև քարտի տեղափոխման ժամանակը:

[6] Եթե Հաճախորդի հեռախոսահամարը տրամադրված չէ ՀՀ-ում գործող օպերատորների կողմից (օտարերկրյա հեռախոսահամար է), ապա Բանկը կարող է քարտային որոշ գործարքների վերաբերյալ հաղորդագրությունները առաջնահերթ ուղարկել Հաճախորդի հեռախոսահամարին «Viber» կամ «WhatsApp» հավելվածների միջոցով, իսկ այդ հավելվածների միջոցով ծանուցման անհնարինության դեպքում՝ SMS հաղորդագրությամբ:

12. Visa FIFA World Cup 26™ ֆիզիկական քարտի առաքումը անվճար է: Քարտերի առաքման հնարավորությունը հասանելի է Երևան քաղաքում և ՀՀ մարզերում: Քարտերի առաքման հնարավորությունը գործում է Բանկի մասնաճյուղում և Բանկի բջջային հավելվածի միջոցով նոր քարտ պատվիրելու դեպքում: Քարտը Հաճախորդին առաքվում է Բանկում քարտի առաքման փաթեթը պատրաստ լինելու դեպքում 1-3 աշխատանքային օրվա ընթացքում Երևանի տարածքում և 1-5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ մարզերում առաքումների դեպքում և Հաճախորդին հանձնվում է անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:
13. Նոր պին կոդի տրամադրման համար միջնորդավճար չի գանձվում:
14. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերի բլոկավորումը/ապաբլոկավորում անվճար է:
15. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայությունը ակտիվանում է քարտի պատվիրման պահին հաճախորդի համապատասխան հանձնարարականի հիման վրա: Հաճախորդը կարող է նաև ընտրել գումարի չափը, որը գերազանցող գործարքների վերաբերյալ ցանկանում է ստանալ SMS հաղորդագրություն: Վճարային քարտով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայության ակտիվացում/ապաակտիվացում, ինչպես նաև վերոնշյալ գործարքի գումարի չափի փոփոխություն կարող է իրականացվել քարտի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում հաճախորդի կողմից Բանկի տարածքում/ԻնեկոՕնլայն համակարգում ներկայացված համապատասխան դիմում-հայտի հիման վրա:
16. Քաղվածքի ամսաթիվ (Statement date) է համարվում յուրաքանչյուր ամսվա 1-ը: Ամսական քաղվածքի տրամադրումը անվճար է: Յուրաքանչյուր լրացուցիչ քաղվածքի տրամադրման դեպքում գանձվում է սակագին՝ համաձայն համապատասխան սակագնային պլանի:
17. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերը ենթակա չեն վերաթողարկման կամ փոխարինման:
18. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերի գործողության ժամկետի ավարտին կամ քարտային հաշվի վաղաժամկետ փակման դեպքում քարտային հաշվին առկա դրամական միջոցները փոխանցվում են հաճախորդի ընթացիկ հաշվին առավելագույնը հաջորդ ամսվա առաջին 5 աշխատանքային օրերի ընթացքում:
19. Բանկի ՖԳԻԱՍ-ների միջոցով վճարային քարտերով իրականացվող գործարքների համար կիրառվում է սույն փաստաթղթով սահմանված՝ Ինեկոբանկի կանխիկացման կետերից կանխիկի տրամադրման սակագինը՝ բացառությամբ կոմունալ վճարումների իրականացման գործարքների, որոնց համար միջնորդավճար չի սահմանվում:
20. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:

ՆԵՐՔԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Սույն փաստաթղթով սահմանված Visa Digital քարտը չի կարող տպագրվել և ֆիզիկապես տրամադրվել հաճախորդին:

Փոփոխությունների նկարագիր

Խմբագրության համար	Ամսաթիվ	Հաստատող մարմին	Որոշման համար	Մշակող/ներկայացնող	Փոփոխությունների նկարագիրը
Խմբագրություն 15	01.04.2026	Տնօրինություն	14	Ա. Դանիելյան	Լրացում այն մասին, որ անկախ սույն փաստաթղթով սահմանված սակագներից՝ այլ բանկերը իրենց կողմից սպասարկվող կանխիկացման կետերում կարող են կիրառել լրացուցիչ վճարներ իրականացվող գործարքների համար, սույն փաստաթղթով

					սահմանված սակագինը կիրառվում է գործարքի ամբողջական գումարի նկատմամբ, որը ներառում է նաև այլ բանկի կողմից հնարավոր միջնորդավճարները:
Խմբագրություն 15.1	08.06.2026			Ա. Դանիելյան	Visa FIFA World Cup 26™ ֆիզիկական տարբերակով քարտի պայմանների ավելացում: